*(անգործության) և **որոշումների** բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV
(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության՝ <<ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Ս.Մուրադյանի 28.12.2022 թվականի որոշումն անվավեր ճանաչելու, ինչպես նաև մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու, այն է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար Ս.Մուրադյանի 28.12.2022 թվականի որոշման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից <<ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 10.05.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:
4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
5. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2023.07.07 10:27:48 **Ա. ՕՀԱՆՅԱՆ**